ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/6» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

13-ը մայիսի 2019թ.
ժամը 12^{00}

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ ԿԾ և ԶԲ վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյանը,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԶԲՖԿ ծառայության պետ Ա. Պապյանը,

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԶԲՖ ՇԲ առաջատար մասնագետ Ա. Սաֆարյանը,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ Մ. Հոխեյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/6» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ. Հոխեյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակի մասին.
2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/6» ծածկագրով մրցույթի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4.Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/6» ծածկագրով մրցույթի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Մ. Հոխեյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **«Այլ էլեկտրական մոնտաժային աշխատանքների»** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/6» ծածկագրով մրցույթին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Սաշիկ և Սևակ եղբայրներ» ՍՊԸ

2 .«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/6» ծածկագրով բաց մրցույթի էլեկտրոնային հայտը կազմելու և ներկայացնելու՝ մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Մ. Հոխեյան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցի էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են և համապատասխանում են «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/6» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Մ. Հոխեյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները

Չափաբաժին N 1՝ Այլ էլեկտրական մոնտաժային աշխատանքներ.

Նախահաշվային գին 9 005 446 ՀՀ դրամ

Հ/հ	Մասնակցի անվանում	Առաջարկած գին /ՀՀ դրամ/		
		Առանց ԱԱՀ	ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	«Սաշիկ և Սևակ եղբայրներ» ՍՊԸ	6 641 500	1 328 300	7 969 800

Ներկայացված են ծավալաթերթով նախատեսված աշխատանքների (առանձին փողերի) համար մասնակցի կողմից առաջարկվող միավորի գների հանրագումարի արդյունքում ստացվող թվերը:

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/: Համաձայն ներկայացված գնային առաջարկի՝ «Սաշիկ և Սևակ եղբայրներ» ՍՊԸ-ն աշխատում է ԱԱՀ-ով:

3.3 Քանի որ միայն «Սաշիկ և Սևակ եղբայրներ» ՍՊԸ-ն էր հայտ ներկայացրել, ուստի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները, գնի նվազեցման նպատակով 23.05.2019թ. ժամը 15:00-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում կազմակերպեց միաժամանակյա բանակցություններ, որին ներկայացավ «Սաշիկ և Սևակ եղբայրներ» ՍՊԸ լիազորված անձը /լիազորագրով/ և վերջինս չհամաձայնեց «Սաշիկ և Սևակ եղբայրներ» ՍՊԸ կողմից առաջարկած գինը նվազեցնել, ինչն էլ մնաց անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/6» ծածկագրով բաց մրցույթի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Մ. Հոխեյան)

4.1 24.05.209թ.՝ Էլեկտրոնային գնահատման արդյունքում «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/6» ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա բաց մրցույթում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Սաշիկ և Սևակ եղբայրներ» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/6» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Մ. Հոխեյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ. Հոխեյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/6» ծածկագրով մրցույթի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվելիք հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Մուրադյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Ա. Սաֆարյան
Գնումները համակարգող՝	Մ. Հոխեյան